

Վեցերորդ հաղորդում

Վերադարձած գերիների մաքրման խորքային նշանակությունը

Գրվածքների ընթերցում. Եզր 9:1–10:44, Նեմ 13:23-30ա,
Մտք 5:8, Հյտ 21:18բ, 21բ, 22:4

I. Տիրոջ վերականգնումը եզակի է, և այն պետք է բացարձակորեն մաքուր լինի, չերկատված և սուրբ, առանց որևէ խառնուրդի. ուստի մեզ «եզրասներ» ու «նենմիաներ» են անհրաժեշտ, որոնք կկատարեն մաքրման աշխատանքը. Տիրոջ վերականգնման բոլոր փուլերում մաքրման անհրաժեշտություն կա.

Ա. Եզրասը մաքրեց վերականգնումը՝ այնպես անելով, որ «սուրբ սերմը» առանձնացվի ցանկացած հեթանոսական բանից՝ Եզր 9:1–10:44.

1. Նախքան Եզրասի գալը խառնուրդ կար, քանի որ իսրայելացիներից ոմանք ամուսնացել էին հեթանոս կանանց հետ և այս խառնուրդից ծնված զավակներ ունեին. սա նախատիպ է, որը պետք է կիրառենք հոգևոր առումով, ոչ թե տառացիորեն:

2. Տիրոջ վերականգնման մեջ մաքրման անհրաժեշտություն կա, որը «սուրբ սերմը» կանջատի ցանկացած բանից, որը հեթանոսական է՝ 9:1-2.

ա. Տիրոջ վերականգնումը սուրբ սերմ է. մենք պետք է այնպես մաքուր լինենք, որ սուրբ սերմը ոչ մի դեպքում չձուլվի որևէ հեթանոսական բանի հետ:

բ. Երբ վերականգնումը սուրբ լինի, մենք կտեսնենք Տիրոջ օրհնությունը՝ Եզկ 34:26:

Բ. Տունը կառուցելուց հետո մեզ մաքրում է անհրաժեշտ (որը տեսնում ենք Եզրասի առաջնորդության ներքո մաքրվելու օրինակով), իսկ քաղաքը կառուցելուց հետո, մեզ վերստին մաքրում է պետք (ինչը տեսնում ենք Նենմիայի բացարձակության օրինակով)՝ Եզր 9:1-2, 10:1-44, Նեմ 13:1-30ա:

Գ. Տեղական եկեղեցիներում մենք պետք է հանգամանորեն մաքրվենք ողջ խառնուրդից. ցանկացած առօրեական բան և Տիրոջ վերականգնման երկնային բնությանը հակասող ցանկացած բան պետք է սրբվի՝ Բ Տմբ 2:19-22:

II. Բարելոնը Աստծու բաների հետ կուռքերի բաների խառնուրդ է, իսկ բարելոնի սկզբունքը Աստծու Խոսքի հետ մարդու բաները և Հոգու բաների հետ մտեղիի բաները խառնելն է՝ Բ Մնց 36:6-7, Եզր 1:11, Հյտ 17:3-5.

Ա. Բարելոնի մասը կազմող ցանկացած բան զարչելի է Աստծու աչքին, և ցանկացած բարելոնական բան Սատանային հիմք է տալիս՝ Աստծու մարդկանց պարտության մատնելու՝ Հս 7:1-21:

Բ. Աստված Բարելոնի սկզբունքն ատում է ավելի, քան ցանկացած այլ բան. միայն երբ դատենք մեր մեջ եղող ամեն բարելոնականը,

կկարողանանք խոստովանել, որ մենք նույնպես ատում ենք Բաբելոնի սկզբունքը:

III. Գործքի 21-րդ գլխում և Հակոբոսի գրքում խառնուրդ ենք տեսնում. Հակոբոսը Հին Կտակարանը խառնել էր Նոր Կտակարանի հետ՝ նոր տնօրինությունը հնի հետ, Աստծու նոր ժողովրդին հնի հետ և նոր մարդուն հին մարդու հետ՝ Հկր 1:1, 17-18, 2:1-4, 8-12, 3:2, 4:11-12, 5:10-11.

Ա. Գրծ 21-րդ գլուխը մերկայացնում է ահավոր խառնուրդը, որ կար Երուսաղեմում եղող եկեղեցում. հրեա հավատացյալները շարունակում էին պահել Մովսեսի օրենքը, մնացել էին հինկտակարանյան տնօրինությունում և հուդայականության ուժեղ ազդեցության ներքո էին՝ խառնելով Աստծու նորկտակարանյան տնտեսությունը հնացած հինկտակարանյան տնտեսության հետ՝ խխ. 18-21:

Բ. Նրանք անտեղյակ էին, որ օրենքի տնօրինությունը լիովին ավարտվել է, որ պետք է լիովին ենթարկվել շնորհքի տնօրինությանը, և որ այս երկու տնօրինությունների միջև տարբերության ցանկացած անտեսում հակառակ է Աստծու տնօրինական կառավարմանը և մեծ վնաս կպատճառի Աստծու՝ եկեղեցին՝ որպես Քրիստոսի արտահայտությունը կառուցելու տնտեսական ծրագրին՝ Հվի 1:16-17, Հյտ 2:9:

Գ. Օրենքը պահանջներ է ներկայացնում մարդուն՝ համաձայն այն բանի, ինչ Աստված է. շնորհքը մարդուն մատակարարում է այն, ինչ Աստված է, որպեսզի բավարարի Աստծու պահանջները. շնորհքն Աստված է, ում մարդը վայելում է՝ Հվի 1:16-17, Գղտ 6:18, Բ Կրթ 13:14, 12:9, Ա Պտ 4:10, Եփս 3:2, 4:29, 6:24:

IV. Աստծու զավակների միջավայրում մեծ խնդիր է «ես»-ի խառնուրդը հոգու հետ՝ Եբր 4:12.

Ա. Այս խառնուրդը շատերին որակազրկում է Աստծուն ծառայելու, որովհետև նրանց հոգում խառնուրդ կա, որը տհաճ է Աստծու համար՝ Բ Տմթ 1:3:

Բ. Մեր ամենախոր մասում եղող հոգին մաքուր ու չպղծված է, սակայն երբ հոգին դուրս է ելնում և անցնում է մեր շնչով ու մարմնով, այն կարող է կեղտոտվել պղծությամբ ու ապականությամբ՝ Բ Կրթ 7:1:

Գ. Մեր հոգու վրա աշխատանքում շեշտադրվում է աշխատանքը անմաքուր շարժառիթների և մտադրությունների, ինչպես նաև մեր ներսում եղող այլ խառնուրդների վրա՝ Ա Թսղ 5:23, Բ Տմթ 1:7:

V. Մենք պետք է մաքուր լինենք սրտով, խղճով և հոգով.

Ա. Սրտով մաքուրները կտեսնեն Աստծուն՝ Մտթ 5:8, Հոր 42:5, Հյտ 22:4.

1. Սրտով մաքուր լինել նշանակում է նպատակներում չերկատված լինել՝ ունենալ Աստծու փառքի համար Աստծու կամքն իրագործելու մեկ նպատակ՝ Ա Կրթ 10:31:

2. Մաքուր սիրտն այն սիրտն է, որը Տիրոջն ընդունում է որպես եզակի նպատակի՝ Ա Տմթ 1:5, Բ Տմթ 2:22, Սղմ 73:1:

3. Նորկտակարանյան իմաստով Աստծուն տեսնելը հավասարազոր է Աստծուն ձեռք բերելուն, իսկ Աստծուն ձեռք բերել նշանակում է ընդունել Աստծուն Նրա տարրի, կյանքի և բնության մեջ՝ Աստծով կազմվելու համար. Աստծուն տեսնելը փոխակերպում է մեզ, որովհետև Աստծուն տեսնելով՝ մեր մեջ ենք ընդունում Նրա տարրը և մեր հին տարրը դուրս է մղվում՝ Բ Կրթ 3:18:
 4. Աստծուն տեսնել նշանակում է փոխակերպվել Քրիստոսի՝ Աստվածամարդու փառավոր պատկերին, որպեսզի արտահայտենք Աստծուն Նրա կյանքով և ներկայացնենք Նրան Նրա իշխանությամբ՝ Ա Հվի 3:1-3, Ծնդ 1:26:
 5. Մենք պետք է սրտով մաքուր և Տիրոջ վերականգնման առնչությամբ չերկատված լինենք. միայն այդժամ մենք կկարողանանք օգնություն ցուցաբերել վերականգնմանը՝ Ա Տմք 1:5, Բ Տմք 2:22, Ա Պտ 1:22:
- Բ. Մենք պետք է ոչ միայն բարի խիղճ, այլև մաքուր խիղճ ունենանք՝ Գրծ 23:1, 24:16, Ա Տմք 3:9, Բ Տմք 1:3.
1. Բարի խիղճն Աստծու և մարդու հանդեպ անխոչընդոտ խիղճն է՝ Գրծ 23:1, 24:16:
 2. Մաքուր խիղճն ամեն խառնուրդից մաքրված խիղճն է. այսպիսի խիղճը վկայում է, որ, ինչպես Պողոսը, մենք միայն Աստծուն ու Նրա կամքն ենք փնտրում՝ Բ Տմք 1:3:
- Գ. Աշխատանքում պահանջվող առաջին որակը հոգու մաքրությունն է՝ Բ Կրթ 6:4ա, 6.
1. Շատ դժվար է գտնել մի մարդու, ում հոգին մաքուր է (7:1). մաքրությունը ղեկավարման մեջ անհրաժեշտ պայմանն ու մեր ծառայության հիմնական դրությունն է (Ա Տմք 3:9, 1:5). խառնուրդի խնդիրը լրջագույն խնդիրն է մշակների միջավայրում. անմաքրությունը հաճախ թյուրըմբռնման և կասկածանքի աղբյուր է լինում (Բ Տմք 1:3, Ա Տմք 3:9, Տու 1:15):
 2. Մենք պետք է լիովին վերջ դնենք մեր հոգում եղող խառնուրդին, որպեսզի երբ մեր հոգին ազատագրվի, այն վտանգավոր չլինի և ուրիշների համար խնդիր չառաջացնի:
 3. Եթե ուզում ենք օգտագործվել Աստծու կողմից, մեր հոգին պետք է ազատագրվի, և մեր հոգին պետք է մաքուր լինի՝ Բ Կրթ 6:4ա, 6:

VI. Նոր Երուսաղեմ քաղաքը մաքուր ոսկի է, մաքուր ապակու նման, և քաղաքի փողոցն է մաքուր ոսկի, թափանցիկ ապակու պես՝ Հյտ 21:18բ, 21բ.

- Ա. Ոսկին խորհրդապատկերում է Աստծու բնությունը. քաղաքի՝ մաքուր ոսկի լինելը ցույց է տալիս, որ քաղաքն աստվածային բնությունից է կազմված, և աստվածային բնությունը դրա տարրն է՝ իս. 18բ:
- Բ. Փողոցի և քաղաքի մաքուր ոսկին մաքուր ապակու նման է, ինչը նշանակում է, որ ողջ քաղաքը թափանցիկ է և դույզն-ինչ պղտորված չէ՝ իս. 21բ.
1. Եթե Աստծու բնությունն ընդունենք որպես մեր եզակի ճանապարհը,

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

կլինենք մաքուր, անխառնուրդ և թափանցիկ՝ առանց որևէ պղտորվածության:

2. Եթե ներարկվենք ու հագենանք կենդանարար Հոգով, մեր ներքին էությունը կդառնա թափանցիկ և բյուրեղի պես մաքուր՝ Բ Կրթ 3:8-9, 18:

Գ. Եթե ուզում ենք իրական եկեղեցական կյանք ունենալ, եկեղեցին ինքը պետք է մաքուր ոսկի լինի, այսինքն՝ լիովին կազմված լինի աստվածային բնությունից. այստեղ մեզ անհրաժեշտ է խաչի աշխատանքը, որը կգտի ու կմաքրի մեզ բոլոր խառնուրդներից՝ Հյտ 1:11, 20:

Դ. Ուրացողական քրիստոնեական աշխարհի և իսկական եկեղեցու միջև տարբերությունն այն է, որ առաջինը խառնուրդ է, իսկ երկրորդը՝ մաքուր բան է. տեղական եկեղեցիները, ինչպես և Նոր Երուսաղեմը, պետք է բյուրեղի պես մաքուր լինեն՝ առանց որևէ խառնուրդի՝ 22:1: